

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

25 դեկտեմբերի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 7. Գրիգորի Սադյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 8. Լիաննա Գալստյան |
| 3. Աննա Կարախանյան | 9. Միսակ Խաչատրյան |
| 4. Արամ Վերդյան | 10. Միրանուշ Վարդանյան |
| 5. Արման Ներսիսյան | 11. Քրիստինա Հակոբյան |
| 6. Իգոր Մկրտումյան | 12. Քրիստինե Գյոնջյան |

Նիստին ներկա էր նաև կազմակերպության անդամ Նարինե Դերձակյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2021 թվականի ծախսերի նախահաշվին համաձայնություն տալու մասին:
2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության հաստիքացուցակին համաձայնություն տալու մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2021 թվականի ծախսերի նախահաշվին համաձայնություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցան պարոնայք Անդրանիկ Ալեքսանյանը և Արման Ներսիսյանը, ովքեր ներկայացրեցին կազմակերպության 2021 թվականի ծախսերի նախահաշիվը: Ելույթների ավարտից հետո խորհրդի անդամների կողմից ներկայացված նախահաշվի վերաբերյալ տրվեցին հարցեր:

Համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո, քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

Որոշում՝ Համաձայնություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2021 թվականի ծախսերի նախահաշվին:

2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության հաստիքացուցակին համաձայնություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Արման Ներսիսյանը՝ ներկայացնելով նոր հաստիքացուցակը և հիմնավորելով այն փոփոխությունները, որոնք առաջարկվում են նոր հաստիքացուցակով:


Ելույթի ավարտից հետո ծավալվեց քննարկում: Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

Որոշում՝ Համաձայնություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության հաստիքացուցակին:

Մինչ խորհրդի նիստն ավարտված հայտարարելը պարոն Ալբերտ Տոնեյանը ներկայացրեց տեղեկատվություն ռեգիստրարների ակրեդիտացիայի և մշտադիտարկման աշխատանքային խմբի շրջանակներում իրականացված՝ «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցմանն առնչվող քննարկումների վերաբերյալ:

Նիստի նախագահող՝

Նիստի քարտուղար՝



Իգոր Մկրտումյան

Քրիստինա Հակոբյան